

## Կարծիք

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

01.12.2021 թ.-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում քննարկման է ներկայացվել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը<sup>1</sup> (այսուհետ՝ նաև Նախագիծ), որի հեղինակն է ՀՀ արդարադատության նախարարությունը:

Նշված նախագծով առաջարկվում է.

- խոշտանգման վերաբերյալ քրեական գործերով նախաքննության իրականացումը ինչպես գործող քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտնող նոր քրեական դատավարության օրենսգրքով վերապահել ՀՀ քննչական կոմիտեի քննիչներին՝ ըստ այդմ խմբագրելով քննչական ենթակայությանը վերաբերող կարգավորումները,
- ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից կատարված հանցագործությունների (այդ թվում՝ խոշտանգման) վերաբերյալ քրեական գործերով նախաքննության իրականացումը վերապահել ՀՀ ազգային անվտանգության մարմիններին՝ ապահովելու քննության օբյեկտիվությունը,
- ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ, 150-րդ, 154.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործություններով քրեական գործերի նախաքննության իրականացումը վերապահել ՀՀ քննչական կոմիտեին:

Դրական ենք գնահատում նախագծով առաջարկվող փոփոխությունները, կապված 1-ին և 3-րդ կետերում նշված գործերով քննչական ենթակայության փոփոխության հետ, սակայն մինևույն ժամանակ գտնում ենք, որ քննչական ենթակայության փոփոխության անհրաժեշտություն առկա է նաև գործերի ավելի լայն շրջանակի հետ կապված:

Ազգային անվտանգության մարմինների՝ մինչդատական վարույթ իրականացնելու իրավասության խնդիրն ունի երկու հիմք.

- անկախության երաշխիքների բացակայություն.
- գործունեության տարբերվող նպատակ:

### 1. Անկախության երաշխիքների բացակայություն

<sup>1</sup> <https://www.e-draft.am/projects/3786/about>

Հատկանշական է, որ քննարկման դրված նախագծով առաջարկվող քննչական ենթակայության փոփոխությունների անհրաժեշտությունը հեղինակի կողմից հիմնավորվել է նմանատիպ գործերը անկախ մարմնի կողմից քննելու անհրաժեշտությամբ<sup>2</sup>: Նախաձեռնողը իրավացիորեն արձանագրում է այն կարևոր իրողությունը, որ գործող օրենսդրությունը չի օժտում ազգային անվտանգության մարմիններին բավարար անկախության երաշխիքներով, ավելին՝ նրանք գտնվում են գործադիրի ենթակայության տակ<sup>3</sup>: Սրան անհրաժեշտ է ավելացնել, որ ի տարբերություն այլ քննչական մարմինների՝ (օրինակ ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի) դեպքերի՝ ազգային անվտանգության մարմինների դեպքում վերաբերելի օրենսդրությունը ոչ միայն չի ամրագրում դրանց գործունեության անկախության ու ինքնուրույնության երաշխիքներ, այլև դրանք չի նախատեսում նույնիսկ որպես գործունեության սկզբունք<sup>4</sup>:

Հարկ ենք համարում նշել նաև, որ քննչական մարմնի անկախության պահանջը բխում է նաև քրեական դատավարության օրենսդրությամբ ամրագրվող՝ մինչդատական քննության օբյեկտիվության, լրիվության և բազմակողմանիության պահանջից (գործի արդարացի քննության սկզբունք):

ԵՆ Խորհրդարանական վեհաժողովը իր թիվ 1402 հանձնարարականով մտահոգություն է հայտնել անդամ երկրների անվտանգության ծառայությունների՝ նախաքննական գործառույթներ իրականացնելու իրավասության վերաբերյալ՝ հաշվի առնելով մի շարք գործոններ: Վեհաժողովը մասնավորապես նշել է, որ անվտանգության ծառայությունները հաճախ անձանց իրավունքների նկատմամբ հարգանքից վեր են դասում այն շահերը, որոնք ընկալում են որպես ազգային անվտանգության և իրենց երկրի շահեր և, հաշվի առնելով այն, որ այդ ծառայությունների նկատմամբ վերահսկողությունը հաճախ անբավարար է, բարձր է իշխանության չարաշահման և մարդու իրավունքների ոտնահարման վտանգը: Վեհաժողովն առաջարկում է, որ անվտանգության ծառայություններին չտրվի քրեական գործերով քննություն անցկացնելու, այդ թվում՝ անձանց ձեռքակալելու կամ կալանավորելու իրավասություն, ավելին, նրանք չպետք է ներգրավվեն կազմակերպված հանցավորության դեմ պայքարում՝ բացառությամբ

<sup>2</sup> <https://www.e-draft.am/projects/3786/justification>

<sup>3</sup> «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 4-րդ հոդվածներ:

<sup>4</sup> Տե՛ս «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը և «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը,

շատ կոնկրետ դեպքերի, երբ կազմակերպված հանցագործությունը ակնհայտ վտանգ է ներկայացնում ժողովրդավարական պետության ազատ կարգի համար<sup>5</sup>:

Վերը նշվածի լույսի ներքո խնդրահարույց ենք համարում ազգային անվտանգության մարմինների՝ մինչդատական վարույթ իրականացնելու իրավասության առկայությունն առհասարակ և գտնում ենք, որ խնդիրն առավել արդիական է բարձրաստիճան պաշտոնատար անձանց և պետական ծառայություն իրականացնող անձանց հանցագործությունների վերաբերյալ քննություն իրականացնելու իրավասության առումով: Վերջին խումբ գործերով a priori ողջամիտ կասկածի տակ է գործադիր մարմնի ենթակայության տակ գտնվող քննչական մարմնի՝ մինչդատական քննության օբյեկտիվության պահանջները պահպանելու կարողությունը:

## 2. Գործունեության տարբերվող նպատակ

Նշվածից բացի պետք է արձանագրել նաև, որ ազգային անվտանգության մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը որպես նշված մարմինների գործունեության նպատակ սահմանում է անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովումը<sup>6</sup>, ինչի շրջանակում ակնհայտորեն տեղավորվում է նույն օրենսդրությամբ սահմանված հանցավորության դեմ պայքարը՝ որպես գործունեության ուղղություն, սակայն նախաքննական գործառույթը ինքնին չի նույնանում հանցավորության դեմ պայքարի հետ (տե՛ս առաջին կետի հիմնավորումները):

Արձանագրենք, որ այս խնդիրները քննարկվել են նաև իրավասու պետական մարմինների հետ, սակայն բարձրացված հարցերով արդյունք չի արձանագրվել:

## **Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկում ենք.**

1. Նախագիծը լրամշակել՝ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնական դիրքի հետ կապված հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննություն իրականացնելու իրավասությունը գործող Քրեական դատավարության օրենսգրքով վերապահելով ՀՀ քննչական կոմիտեի քննիչներին: Միաժամանակ, առաջարկում ենք Քննչական կոմիտեի ծառայողների՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ

<sup>5</sup> <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=16689&lang=en>:

<sup>6</sup> «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված

գործերով քննությունը վերապահել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչներին<sup>7</sup>:

2. Ձեռնամուխ լինել գործող քննչական մարմինների համակարգի բարեփոխմանը՝ բացառելով գործադիր իշխանության ենթակայության ներքո գտնվող մարմինների, այդ թվում՝ ՀՀ ԱԱԾ-ի և ՊԵԿ-ի ստորաբաժանումների՝ մինչդատական վարույթ իրականացնելու իրավասությունը և 2022 թ.-ին ուժի մեջ մտնող Քրեական դատավարության օրենսգրքով դրանց ենթակայությանը հանձնված գործերով մինչդատական քննությունը պատվիրակելով այլ քննչական մարմինների:

*«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ*

*Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ*

*Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան*

*«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ*

---

<sup>7</sup> 1-ին առաջարկը ներկայացվում է որպես խնդրի ժամանակավոր լուծում մինչև 2-րդ մասով առաջարկվող բարեփոխումները: